ԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ

Երկու օր տևեց ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների և ասպիրանտների գիտական կոնֆերանսը, ուր լսվեցին մի շարք հետաքրքրական զեկուցումներ և գիտական հաղորդումներ:

«Հայկական էպոսը Ավ. Իսահակյանի ընկալմամբ» զեկուցումով հանդես եկավ կրտսեր գիտաշխատող Հ. Աբեղյանը: Ավետիք Իսահակյանը՝ մեր մեծագույն քնարերգուն,— ասաց զեկուցողը,— խոր արմատներով կապված լինելով ժողովրդական բանարվեստի հետ, չէր կարող չանդրադառնալ հայկական էպոսին, որտեղ մարմնավորվում հոգի է ստանում ինքը ազգը, ժողովուրդը՝ իր լավագույն ձգտումներով ու իդեալներով, տառապանքներով ու հաղթանակներով:

Կրտսեր գիտաշխատող Կ. Մուրադյանի զեկուցման նյութն էր՝ «Բարսեղ Կեսարացու «Վեցօրեան» Շիրակացու աղբյուր»:

«Ժամանակակից դրամայի մի քանի առանձնահատկությունների մասին» թեմայով զեկուցեց Լ. Ղազարյանը: Նա անդրադարձավ դրամատուրգիայի տեսության որոշ օրինաչափություններին և նրանց արտացոլմանը ժամանակակից դրամատիկական պրակտիկայում:

Ասպիրանտ Կ. Սուքիասյանը «Սիմեոն Ապարանցու «Վիպասանութեան» աղբյուրները» զեկուցման մեջ փորձ արեց ճշտելու Ապարանցու օգտագործած սկզբնաղբյուրները, որոնք հնարավորություն են տալիս պարզելու Խորենացու, Փարպեցու, Անանունի և Սեբեոսի երկերի բնագրերի հետ կապված որոշ հարցեր:

«Հրանտ Ասատուրի «Դիմաստվերների» արժեքը» հետաքրքիր զեկուցումը կարդաց կրտսեր գիտաշխատող Ս. Հայրապետյանը: Նա նշեց, որ այդ երկի մեջ շատ մոտիկից ու պարզորեն անդրադառնում է 19-րդ դարը, իր մտավոր կյանքով, իր ձգտումներով, կրած ազդեցություններով:

«Սփյուռքահայ գրականության ավանդույթները» նյութին նվիրեց իր ելույթը ասպիրանտ Գր. Գույումջյանը: Նա նշեց, որ սփյուռքահայ գրականությունը ակնառու նվաճումներ է արձանագրել մի քանի ժանրերում, որոնք և լրացնում են սովետահայ գրականությունը և միասին մաս կազմում բազմադարյան հայ գրականության:

Հետաքրքիր էին նաև կրտսեր գիտաշխատողներ Յու. Փանյանի «Քնարական պոեզիայի ճանաչողության առարկան», Հ. Գալստյանի «Գրականության արտահայտչամիջոցները, կերպը, առարկան», Լ. Մուրադյանի «Վրթանես Փափազյանը եվրոպական գրականության մասին», Ա. Արամյանի «Ծատուրյանը Պուշկինի թարգմանիչ» և Ֆ. Մելոյանի «Դիտողություններ արդի արձակի մասին» զեկուցումները:

Կարդացված զեկուցումների վերաբերյալ դիտողություններով հանդես եկան՝ Արամ Ինճիկյանը, բանասիրական գիտությունների դոկտորներ Էդ. Զրբաշյանը և Ս. Դարոնյանը, գիտությունների թեկնածուներ Հ. Մարգարյանը, Զ. Ավետիսյանը:

Կոնֆերանսի արդյունքներն ամփոփեց ինստիտուտի դիրեկտոր, բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Նալբանդյանը: